մի հիմնարկութիւն, որ առաջ է եկել նախկին գլխագնի՝ հարսի գնման վճարի՝ սովորութիւնից աստիճանական զարգացմամբ, երբ հաւասարակական փոխադարձ յարաբերութիւնները սկսել են կարգաւորուել սոցիալ-տնտեսական զարգացման հետևանքի անհատական սկզբունքներով։ Աշխատենք մի քանի բնորոշ փաստերով լուսաբանել օժիտի վերաբերմամբ վերը յայտնած կարծիքները։

Հին եբրայական իրաւունքի մէջ տիրապետում էր գնման սովորութիւնը։ Փեսացուի կողմից վճարուած գլխագնի մի մասն, ինչպէս երևում էր, անցնում էր աղջկայ ձեռքն իբրև իւր սեփականութիւն։ Այդ մասին կարելի է կողմնակի ապացոյցներ գտնել Աստուածաշնչի մի շարք հատուածների մէջ։ Գիրք Ծննդոցի ԼԱ. գլուխը բովանդակում է Յակոբի և Լաբանի պատմութեան այն կէտը, թէ ինչպէս նոքա երկուքը փոխադարձ համաձայնութիւն էին կայացրել, որով Լաբանի հօտից այն բոլոր խաշները, որոնք «գորշախայտ, պիտակ և խայտախարիք» ծնուէին, պէտք է պատկանէին Յակոբին, իսկ մնացեալները Լաբանին։ Եւ եղաւ, որ մի քանի տարի անընդհատ ծնուում էին խաշներ այն գոյնով ու նշաններով, որ հարկաւոր էին Յակոբին։ Այսպիսով Յակոբը հարստացաւ 'ի հաշիւ Լաբանի։ Այն ժամանակ Լաբանի որդիքը բողոքեցին Յակոբի դէմ, թէ «Էառ Յակոբ զամենայն ինչս հօր մերոյ, և 'ի հօր մերոյ ընչից արար իւր զայն ամենայն փառս»։ Ուստի Ռաքէլն ու Լիան՝ Լաբանի դստերքն իրաւունք համարեցին յայտնել Յակոբի մօտ առաքած հրեշտակին. «Մի՞թէ դոյ ևս մեր այսուհետև բաժին՝ և ժառանգութիւն 'ի տան հօր մերոյ։ Ոչ ապաքէն իբրև զօտարոտի՞ս համարեալ եմք նմա, զի վաճառեաց զմեզ՝ և եկեր ուտելով զարծաթ մեր»։ Յայտնի գիտնական Մայերը, լուսաբանելով այս վերջին խօսքերը իւր աշխատութեան մէջ՝ «Die Rechte der Israeliten, Athenern und Römer», նկատում է, որ Լաբանի աղջիկների խօսքերից հետևում է, որ սրանք ստանում էին իրենց հօրից փեսացուի կողմից իրենց համար վճարած գլխագնի մի մասը։

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան